

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ի ՓԱՐԻՋ - ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Վարդանանց և Բարեկենդանի զոյգ տոներում առթիվ փետր. 26ին «Պէշիքթաշլեան» սրահին մէջ կատարուեցաւ զաղութիւն կողմէ այնքան սպասուած Թատերական մերկայացումը, կազմակերպուած Մուրատեան վարժարանի աշակերտներէն:

Պէտք է խոստովանիլ որ շնորհիւ վաստակաւոր երաժիշտ ուսուցչապետ Գ. Մ. Ալեմշահի և դաստիարակ ուսուցիչ Գ. Յ. Պալեանի անձնուէր ջանքերուն, ինչպէս միշտ՝ այս տարի եւս մերկայացումը շատ յաջող անցաւ:

Բաց ի աշակերտներու ծնողներէն՝ սրահը լի էր բազմաթիւ ազգայիններով՝ որոնք այնքան սիրով և զուրգուրանքով կը մօտենան այդ վարժարանին, որպէս ազգային լուսարժարժ փառոսի մը:

Յայտագրի Ա. մասին մէջ մերկայացուեցաւ Միւսէի «Ղորեմցաշիոյ» տպաւորիչ ողբերգութիւնը, Թարգմանուած Հ. Վ. Յովհաննէսեանէ, իսկ Բ. մասին մէջ մերկայացուեցաւ Պիւմիքի «Աշկապուկ» երգախառն զանգար, մոյմպէս Թարգմանուած Հ. Վ. Յովհաննէսեանէ, և ֆրանսերէն լեզուով Պոստարի երգախառն «Փոքրիկ խոհարարներ»ը:

Ներկայացումն ամբողջ տեսողութեամբ վարժարանին սաները հակառակ իրենց աշակերտ անունին, մըրքի խաղերով կատարեալ արուեստագէտներու տպաւորութիւնը տուին, մերկաները ձգելով մեծ զարմացումի մէջ:

Մասնաւոր գնահատանքի արժանացան Ժ. Տէր Թովմասեան՝ Ղորեմցաշիոյի դերին մէջ՝ իր համարձակ ու ծարպիկ խաղարկութեամբ Ա. Վրդիկեան՝ Պիւմիքի խաղարկութեամբ մէջ մարմնացումը մերկայացուց բունաւորի մը սեւ ու դաժան տիպարին: Խ. Ալեմշահեան փայլեցաւ դահիճի դերին մէջ, ինչպէս Ա. Նատիկեան, Ն. Մեսրոպեան և Բ. Պոտոսեան իրենց ուժեղ և զիտակեց խաղարկութեամբ:

Զուեշտին մէջ բուն ծափահարութիւններու արժանացաւ Ա. Վրդիկեան Ղորեմի դերին մէջ, որ իր ինքնատիպ ձեւերով կը տիրապետէր բն. մին. Նոյմպէս Ա. Նատիկեան, Բ. Պոտոսեան եւ Ալեմշահեան իրենց ուսանողի դերերուն մէջ, զանգուկապետի դերով՝ Վ. Պարկըրեան և սպասակի դերով՝ Պ. Օհանեան շատ յաջող էին:

Երգախաղին մէջ մասնաւոր շնորհաւորութիւններու արժանացաւ փոքրիկ Մոլոմոնեան՝ Ղիւլի դերին մէջ իր ձայնով և համարձակ խաղարկութեամբ: Մոյմպէս Բ. Պարկըրեան խոհարարապետի դերին մէջ, Սիֆերեան, Դաստակեան, Փափագեան, Օհանեան իրենց խոհարարի դերերուն մէջ:

Հանդէսին կանոնաւորութիւնը և խմամուտ մերկայացումը ցոյց տուին կազմակերպողներուն արուեստասէր հոգին: Երեք ժամ կախարդական մթնոլորտ մը ստեղծուած էր. ողբերգութիւն և

զուեշտ թէ՛ միւթի ըմտրութեամբ և թէ հոգեբանական ըմբռնումով յաւագոյն էր որ այս տարի փառիկ հայութիւնը կը տեսնէր, հակառակ որ քաղաքիս մէջ կը վիտամ տիտղոսաւոր դերասաններ, Ամշուշտ աշակերտութիւնը բարոյական և դաստիարակչական մեծ դասեր կ'աւանդէ միւս մերկայացումներէ: Կը շեշտուին անոնց թաքուն ձիրքերը, աւելի վարժ, կենցաղագէտ ու համարձակ կ'ըլլան անոնք: Եւ հոս է Թատրոնի կրթական ուժը:

ԱՅԱՆԱՏԵՍ

Ի ՎԵՆԵՏԻԱ - Մ. ՌԱՓ. ՎԱՐԺԱՐԱՆ

«Ճոխ ծրագիր, կենդանի և փայլուն մերկայացում» աշխատուած բեմի մը վրայ (զեղարուեստական մասին մէջ)՝ Այս է ահա տպաւորութիւնը՝ զոր քաղցիցիք մերկաներու բերնէն:

Ներկայացումներու առաջինը հայերէն էր. փետր. 24ին. բեմադրուած վենետիկեան հայ զաւուրին համար՝ Բարեկենդանի օրերուն:

Բեմադրուեցաւ «Ամիծեալը» ծանր և յուզիչ տրամ, յօրինուած Հ. Թադէոս Վ. Թովմասեանէ, Շիլլէրի «Աւագակներ»ուն հետեւողութեամբ:

Սեւհոգի շունամ, դիւական ծրագիրներով կ'ուզէ իրեն շորթիկ Մորուէնի կոմսութիւնը, ուստի կը համոզէ իր կոմս հօրեղբայրը, Ոտոքար, որ ամիծէ և ժառանգութեան զրկէ մէկ հատիկ զաւակը՝ Ալֆոնսը, հայր և որդի դաւաճանուած՝ հուսկ զիրար կը գտնեն թշուառ վիճակի մէջ: Ալֆոնսի վրէժն ամողոր է. և միմիջ շունամ իր եղեւններուն պատիժը կը քաւէ զարհուրելի մահով մը, Ալֆոնս ալ, թէեւ իր հօր օրհնութիւնն աւանդ՝ զնոյնար կ'իյնայ իր թշնամիներէն:

Ծերունի Ոտոքարի դերն առած էր Հ. Եօրկանեան, զգայուն հոգւոյ մը պրկումներով: Բ. Արամեան «Ամիծեալը» Ալֆոնսը կը մերկայացնէր: Թ. Նապոլեոնիկեան դերասանի ուժեղ զինքը դրաւ շունամի դերին մէջ, ատելութեան և հոգեկան խռովի ցնցող տպաւորութեամբ: Ինչպէս Հ. Ասլանեան՝ որպէս դաւակից, Գլխաւոր դերակատարներէն զատ բեմին վրայ փայլեցաւ վանականի մուրակաւ գերին մէջ՝ Վ. Թիւթիւմեան, Գ. Սեւուրի՝ որպէս սպասաւոր, Ժ. Մաւեան՝ կոմսին հաւատարմը, և իսկապէս ահագնեցիկ աւագա, կախումը որուն զլխաւորներն էին Ն. Յակոբեան, Վ. Ուլուհիսեան, Վ. Խիւքեան, Բ. Երկանեան, Գ. Ներսէսեան և Գ. Վէմեան:

«Վարտապետնայ» ծանօթ զուեշտին մէջ Թ. Նապոլեոնիկեան՝ որպէս Գլխաւոր վաճառական՝ ցուցադրեց տգէտ ու անտաշ շինականի մը ամենէն յաջող տիպարը, որուն հակապատկերն էր սպրիկ և ուռուցիկ զերաւանը՝ Բ. Երկանեան:

Երկուքն ալ կէս ժամի չափ ծափ ու ծիծաղ խլեցին մերկաներէն:

Փետր. 26ին (կրկնուած, մահ. 28ին) բեմադրուեցաւ իտալերէն երգախաղ մը (operette) չորս արարով, խուռն բազմութեան մ'առջեւ:

Նիւթը՝ միջին դարու, Նէպոլիսի արքունեաց

կեանքէն: Իշխանը անտառին մէջ պտոյտի ատեն գերի կը բռնուի աւագակախումբէ մը, որուն պետը՝ Գայլատամ (Dente di lupo) և իր քաջարի զաւակը՝ Բագէաչուի (Oecchio di falco) իշխանին եղբոր եղեւնաւոր առաջարկը կ'ըմբռնին, սպաննելու գերին՝ փոխարէն մեծ զուարի մը: Իսկապէս սրտաշարժ տեսարան մը կը պարզուի բանտին մէջ: Իշխանն արցունքով մեղամարդ երգ մը, աղօթք մը կ'ուղղէ զթառատ Տիրամօր, Բագէաչուին կը յուզուի, կը դառնայ. և ի գիտ իր կեանքին՝ կը փախցնէ իշխանը, Կը ցնդի դաւը: Գայլատամ իմանալով իսպառ՝ կը յարձկի սպաննելու իր զաւակը՝ Բագէաչուին: Երկմքի անտես աջը ձեռնափ կ'ընէ զանի: Նոյն պահուն կ'երեւի իշխանը՝ Երկմքէն զրկուած՝ իր ազատարարին կեանքը փրկելու:

Միւրոյ եւ մերողամտութեան զերգանցօրէն յուզիչ պատկերով կը փակուի տեսարանը:

Աւագակախութի իր դերին մէջ՝ Պրմ. P. A. Rizzo, իտալացի հրսկիչը՝ հոգեկան ուժեղ և բազմազան դժուարին տիպարներ ցուցադրեց:

Փոքրիկ Զ. Մոտիկեան շնորհալի իշխանին դերին մէջ բեմին զոհարկին էր, ազնիւ ու խոհական շարժումներով, ու իտալացիէ մ'աւելի անոյշ լեզուով:

տարանին մէջ) մոյմպէս իտալերէն, վենետիկեան կեանքէն ու բարբառով, շատ յաջող անցաւ:

Հոս ալ մեծագոյն դերակատարը վերեւ յիշուած հսկիչն էր, Պրմ. P. A. Rizzo: Վ. Թիւթիւմեան՝ դատաւոր, Ն. Ֆէսեան և Հ. Եօրկանեան՝ փաստաբաններ, Վ. Ուլուհիսեան՝ դատախազ, Վ. Խիւքեան և Գ. Զեօրդեան վկայ, Գ. Սեւուրի և Գ. Առաքելեան ամենքն ալ շինական չմաշխարհիկ տիպարներ ծնացուցին, զուարճացող



ՎԵՆԵՏԻԱ

ՄՈՒՐԱՏ - ՌԱՓԱՅԷԼԵԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆ

ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ

ԽՈՒՄԵՐԸ

իտալացի հասարակութեան զովհատներուն արժանանալով:

Ուսումնական բարդ ծրագրի մը տակ տքնող սաներ, երբ այնքան փայլեցուցին վարժարանին անունը հայ և իտալական խաղերով, կը խորհիմ թէ այդ ո՛րքան զոհողութիւն արժան է անոնց, ինչպէս իրենց ուղղիչ և դաստիարակ հայրերուն: Պարզ գնահատանքէ մ'աւելի է մեր զգացումը հանդէպ անոնց: Զոհողութիւններ՝ որոնք կը մաղթենք որ ըլլան վաղուան ազգամուէր կեանքի մը գործնական դասերը:

ԽՄԲ.